ղեցական և դպրոցական առարկայի յաջողութեան համար, Առաջնորդը, Հոգաբարձուք, Երեսփոխանք, Գրադարանի անդամք, Աղքատախնամ ընկերութիւն, եւայլն, դիմում են Բագուեցւոց օժանդակութեան, և ստանում են բաւականութիւն, որպէս քանիցս ինձ պատահեց և վերեւն ասել եմ։

Առաջնորդարանի շինութեան խնդիրը լուծեց և վերջացրեց Բագուաբնակ մեծապատիւ պ. Գէորգ Ցովհաննիսեան (Եագօր Իւանիչ) Քալանդարեանցն՝ նուիրելով իւր Շամախում ունեցած մի ձեռք տունը ընդարձակ բակովն ու պարտէզովն՝ Առաջնորդի բնակութեան համար՝ ուր և անցեալ տարուանից (օգոստ. 15, 1888) բնակվում եմ հանգստութեամբ [1]) օրհնելով մեր պարոն Քալանթարեանցի կեանքն և ընտանիքը և աղօթելով նորա ծնողաց հոգւոց համար այժմ և միշտ։ Այսպէս առ այժմ վերջացաւ Առաջնորդարանի խնդիրն շնորհիւ պ. Քալանթարեանցի, որոյ գովութիւնն յարձանագրութեան անդ է Սաղիանի վանից 500 րուբլի նուիրելոյ առթիւ։

Ե. *Սաղիանի վանքի վանական դպրոցի խնդիրն վերջացաւ յարգոյ Բուդաղեան եղբարց հետ, խորհրդակցութեամբ, ինչպէս վերեւը գրած է։*

Զ. *Վանքի շինութեանց և ուսումնարանի պատրաստութեան խնդիրն վերջացրին Բուդաղեան յարգոյ եղբարքն և նոցա շրջապատող վանքասէր պարոնայքն, նուիրելով մի հազար րուբլի դրամ հետեւեալ ցուցակաւ։*

	րուբլի
1. *Ադամեան եղբարք*	175
2. *Բուդաղեանց եղբարք*	175
3. Պ. *Մինաս Մէլիքեանց* -	250
4. *Եղիա Եղիազարեանց*	100
5. *Գրիգոր Ասլանեանց*	100
6. *Հայրապետ Սահակեանց*	100

Պ. Գէորգ Ցովհաննէսեանի ժամանակաւոր նուիրած տանը բնակուեցի 1394 թուի յունիս ամսին, ի հեռանալս ի Շամախւոյ, որոյ համար յայտնեցի գրով եւ յայտնեմ լի ու լի գոհունակութիւնս։